



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հ. Ս. Խ. Հ. ԿԱՐՔԵՐԻ ՍԵԿՏՈՐ Ժ. Տ. Գ. Խ.

ՀԵՂԱՎԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԶԱ

ՀԵՂԱՎԱ ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼ ԿՈՄԲԻՆԱՏ

ԺԵՐԼԻՐԱԳԻ ԿՈՒՑԵԿՏՐ

Ա.Պ.Պ.Չ.ՐՈՒԹՅՈՒՆ Հ. 2, 3, 4

ԿՈԶՄԵՑ Խ. ԱՅՎՈՉՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ



491.99(07)

Q-55

Օ Ե Ր Ե Վ Ա Ն

1981

18 MAY 2010

10. 09.

31.99(51)

4-55

ԱՐ

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 2

(Մեկ ամսվա համար՝ չհաշված ստուգումը)

Թ Ե Մ Ա.

1. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱԲՈՒԹՅՈՒՆ

ա) Ելեկտրիֆիկացիան, ջրանցքներն ու նրանց դերը մեր տրամադրյան սոցիալիստական վերակառուցման գործում.

բ) Գյուղի շինարարություն և սոցիալիստական կենցաղ.

ՆՊԱՏԱԿԸ

Առաջադրության նպատակն եւ պարզել Ելեկտրիֆիկացիայի նշանակությունը՝ լինիյան մեկնաբանությամբ, Հնդամբան պլանի ու նրա կատարման նշանակությունը մեր տնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում և սրանց ու կոմունիստական բարոյականության արտահայտությունը գեղարվեստական դրականության մեջ:

ՆՅՈՒԹԸ

Այս նորատակով հանձնարարվում եւ կարդալ Լենինի «Երեխարիքի Փիլիպիացիա», Կրժիժանովսկու «Հնդամյակի մասին», Հակոբ Հակոբյանի—«Բայլընվիկ եւ Շիր Կանալը», Յե. Զարենցի—«Գարուն», «Այս գարունը» և Արաքսի—«Կոմունայի ճանապարհներ» արձակ և չափածությունը գեղարվեստական դրականության մեջ:

ԵԼԵԿՏՐԻՖԻԿԱՑԻԱՆ

ԼԵՐԻ

Նայեցնէ ՌՍՖՀ Հ քարտեզին. Վալոգդայից դեպի Հյուսիս, Ռոստովից-Դոնից և Սարատովից դեպի Հարավ-արևելք և Որեն-Ռուբովից ու Ամսկից դեպի Հարավ, Տոմսկից դեպի Հյուսիս մուրզից հն անհուն տարածություններ, վորոնց վրա տասնյակ կուլագիւմ են անհուն տարածություններ կարող ելին տեղավորվել: Յեկանական մեծ պետություններ կարող ելին տեղավորվել:

Պետրասի տպարան
Գլավին 6910 (ր)
Պատվեր 5079
Տիրած 500



6/8
41

ՀՀ Ազգային գրադարան



NL0248582

02. 2019

այս ամբողջ տարածության վրա տիրում և նահապետականություն, կիսապայրենություն և խկական վայրենություն: Իսկ ի՞նչ և կատարվում մնացյալ ամբողջ Ռուսաստանի հետամնաց դժուգական անկյուններում: Մի՞թե այն ամեն վայրերում, վարոնք տասնյակ վերստերով գործի են ճանապարհներից և կտրված են յերկաթուղիներից, այսինքն կուլտուրայի, կազմակերպմի, խոշոր արդյունաբերության, մեծ քաղաքների հետ ունենալիք հիմնական կապից, չի՞ տիրում նույն նահապետականությունը, արևոտությունը:

Հնարավլո՞ր և արդյոք Ռուսաստանում այս գերակշռող վիճակից անմիջականորեն սոցիալիզմին անցնելը: Այս, վորոշ չափով հնարավոր է, միայն մի պայմանով, վոր մեզ ճիշտ հայտնի յե այժմ, չնորհիք մի խոշոր, աշխարտված գիտական աշխատանքի: Այդ պայմանը ելեկտրիֆիկացիան է: Յեթե մենք կառուցենք տասնյակ ռատյունական ելեկտրոկայաններ (այժմ մենք պիտի ենք, թե վորոշեց և ի՞նչպես կարենի յե և պետք ե կառուցել), յեթե մենք նրանցից հոսանք անցկացնենք ամեն մի գյուղ, յեթե ձեռք բերենք բավականչափ ելեկտրոնություններ և այլ մեքենաներ, այն ժամանակ հոսքառեականությունից սոցիալիզմին անցնելու համար առողջանանելը չի պահանջվի: Բայց մենք լով դիսենք, վոր «մեկ» պայմանն առաջին հերթի աշխատանքների համար միայն առնվազը մի տասնյակ տարի յե պահանջում, իսկ այդ ժամանակի կրամատումն իր հերթին հնարավոր է միայն այն դայտում, յերբ պրոլետարական հեղափոխությունը կհաղթանակի այսպիսի յերկրներում, ինչպիսին են Անդիան և Գերմանիան, Ամերիկան:

ՀԱՐՑԵՐ ՅԵՎ. ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ տեսակետով ե Լենինն այդքան մեծ ու հիմնական առջև հառնացնում ելեկտրիֆիկացիային:

2. Բացատրի՞ր ելեկտրիֆիկացիայի վճռական գերը մեր տեսության սոցիալիստական վերակառուցման գործում:

3. Ի՞նչորս ես հասկանում ելեկտրիֆիկացիայի մասին Լենինի մի այլ լողունգը—«Խորհրդային իշխանություն պլյուս ելեկտրիֆիկացիա համասար է կոմունիզմի»:

4. Լենինի այս պատզամներն ի՞նչպես են իրադորում կուսակցությունն ու խորհրդային իշխանությունը—ի՞նչ ելեկտրո-

կաթոններ են չինովել, քանիսն են ավարտովելու հնդամյակի ընթացքում և ի՞նչ և նախատեսնում նոր հնդամյակը:

Հ Ն Գ Ա Մ Յ Յ Ա Կ Ի Մ Ա Ս Ի Ն (Արժիժանավոր նախից)

Նայեցեք ՌՍՖՀՆ Հ քարտեղին. Վալոգդայից դեպի Հյաւսիս, ներքի առհմանաղիլին մեր առաջ դրամած են այնպիսի խնդիրներ, վորոնչը տարրերիցում են անցած հնդամյակի խնդիրներից: Այն ժամանակ խոսք կար արտադրական մեքենան գործի դնելու և յեղած արտադրական հնարավորությունների սահմաններում քանակական՝ հնարավորության չափ չուտ՝ Նֆֆեկտ ստանալու մասին: Այժմ մեր առաջ դրամած են արտադրական բոլոր հիմունքների արմատական վերակառուցման ինդիրները: Այժմ, յերբ մեր առաջ խնդիր ենք դնելով համեմ կառնել կարգիստական յերկրներին և առաջ անցնել նրանցից, ապա մենք պետք ե վաղորոք հաստատապես առենք, վոր այցը խնդիրը կարող է լուծվել միայն տարրեր միջոցներով և՝ վոր հին հարաբերությունների հիման վրա այդ խնդիրը լուծել կատարելապես անկարելի յե: Տնտեսական հիմնքը միանգամայն հարմարեցված չեր նոր սոցիալիստական հասարակության պահանջներին: Վերականգնման պրոցեսում չուտով համոզվեցնք, վոր հիմն ունակերի վրա մենք պետք զնալու գնացք գարուղի պատահական համարության մեջ յերկիր եր, վորովհետեւ արդյունաբերության այդ ճյուղը գտնվում եր ուսարյերկրյա կարգիստ ձեռքին: Գյուղատնտեսությունը յենթակա յեր տարերային յերեւությերի և գարգարման վոչ մի հեռանկար չուներ, վորովհետեւ ցրված եր ու մանրացած գյուղացիական միլիոնավոր տնտեսությունների միջև: Մենք ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերի զարգացման խնդրամ զեմ առանք խիստ անհամաշափության, և այդ անհամաշափությունների հաղթահարումը մեր կարմալապույն ինչիքին և:

Այժմ, յերբ կարմված և հնդամյա պլանը, պետք ե զնենք հետեւյալ հարցը. նրա նշած զարգացման ուղիները համապատասխանում են արդյոք կուսակցության ընդհանուր գծին և 15-րդ կուտամագումարի ու հետազա պլենումների վորոշումներին: Այդ հարցին մենք կարող ենք պատասխանել զրականապես: Յերկրի հետազոտ ուժեղ ինդուստրացումը, գյուղատնտեսության ուժեղ

համայնացումը, մետսովի, վառելիքի և քիմիական արդյունաբերության զեկավար գերը, մեքենաշինական ինդուստրիայի զարգացումը՝ ահա պլանի հիմնական դրույթը։ Ներդրումների 78 տոկոսն ընկնում է ծանր արդյունաբերության մրան միայն 22 տոկոսը՝ թեթեք արդյունաբերության։ Մեքենաշինությունն ուժեղանում է յերեք տնտեսմ, իսկ գյուղատնտեսական մեքենաշինությունը՝ չորս տնտեսմ։

Պլանի կարեվորագույն դիճն այն է, վոր նոր մեր ամբողջ ժողովներությունը կառուցում և ներդետիկ մի նոր բաղայի վրա, վորը կարեվորագույն դործոն և քաղաքի և գյուղի հակառակությունները հաղթահարելու համար։ Եներդետիկ այդ բաղան մենք սկսում ենք մացնել նաև գյուղատնտեսական արատը բության ասպարեզը, ակում ենք այդ արատը բությունը յենթարկել գիտական զեկավարության։ Մեր ամբողջ պլանը կառուցված է զուտ գիտական հիմքերի վրա։ Պլանի համար բնորոշ և նաև այն հանդամանքը, վոր նաև ձևել և աճել և տնտեսական մեր գործոն պրակտիկայից և համաձայնեցրած և նրա իրական ընթացքի հետ։ Այդ համոզամանքը հրեշտակ պլանի համար անպայման հաջողություն և ապահովում։ Մեր ներդետիկ բաղայի անումն ասպարություն և այն փաստով, վոր ելեկարտկան ներդետիկ արտադրությունը հնդամյակի ընթացքում 5 միլիոնդ կիլովատ ժամից բարձրանում և մինչեւ 22 միլիոնդ կիլովատ ժամի։

Հետամյա պլանը—յերկրի եկոնոմիկայի սոցիալիստական ռեկոնստրուկցիայի համար բացառիկ նշանակություն ունեցող մի պլան է։ Զարգանալի չե, վոր հնդամյա պլանի խնդիրների շուրջն առանձնահատուկ վորնվարությամբ են քննության առնելում մեր յերկրի սոցիալիզմի շինարարության և տնտեսական դարձացման ամենալուրջ և հիմնական պրոբլեմները։

Ինչ չափավ վոր հնդամյա պլանը կուսակցության և բանխորդական պլանի համական պլանն և համունքանում ժողովրդական տնտեսության սոցիալիստական ռեկոնստրուկցիայի ասպարիզում, շատ բնական և պարզ է, վոր մենք չենք կարող ուղիղ և անսիալ կերպավ մոտենալ հնդամյա պլանի խնդիրների լուծման՝ նախապես չպարզելով յերկրի ներսում տեղի ունեցող գառակարգային պայքարի մեխանիկան։ Ահա թե ինչու մեր տնտեսական պլանի դնաւատառման պահին այնպիսի վիթխարի նշանակություն ունի պլաստիկարդային պլայքարի սրման հաշվառումը այն ժամանա-

կաշը անում, յերբ առանձնապես ուժեղացել է կուլակ-կապիտալիստական տարրերի ընդդիմադրությունը՝ սոցիալիստական ռեկոնստրուկցիայի պլաններին։

Ռեկոնստրուկտիվ շրջանի բարդագույն խնդիրների լուծումը և դրանց հմտ կապված զեկավարությանների հաղթահարումը, զառակարգային պայքարի սրումը յերկրի ներսում, —այս բոլորն աշւակարգային պայքարի սրումը յերակառուցել պրոլետարական դիկտատուրայի բոլոր որդանները և բանվոր դասակարգի կազմակերպությունների շարքերն ու նրանց կատարած աշխատանքը մեթոդները։ Այդ վերակառուցումը պետք է առաջ ընթանա արոլետարական մասսանների ակտիվության զավագույն մորիլիզացիայի, ինքնաքընաւությամ ծավալման, զրուցացիության վերաբերմամբ պրոլետարական զեկավարությունն ուժեղացնելու և գյուղի չքավրատմիջակային մասսաններին ընդդեմ կուլակների միաձուլելու և վորքի հանելու գծով, վորպեսզի այդպիսով հնարավոր և կարելի մնան հետեւվողական և հիմնական համաճնշումը դորձադրել մանր բուրժուատիկան տարերքի մնշման դեմ։

ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ պայմաններում և հնարավոր պլանավորել ժողովրդական վորդ տնտեսությունը։

2. Վո՞րն և հնդամյա պլանի տնտեսական և քաղաքական նշանակությունը։

3. Հետամյակի իրադրժման յերրորդ վճռական տարին մեր տնտեսության գարզացման վո՞ր վուլֆին և համապատասխանում։ Բնօրու յի այդ վուլֆ կոչվում սոցիալիստական վերակառուցման շրջմա։

4. Կապիտալիստական յերկրները կարո՞ղ են պլանավորել իրենց տնտեսությունը, յեթե վոչինչո՞ւ։

5. Վորո՞նք են սոցիալիստական շնորհարության վերականգնումներ և վերակառուցման շրջանների հիմնական առանձնահատկությունները։

6. Ի՞նչ պայմաններում և հնարավոր իրադրժել ժողովրդական տնտեսության հնդամյակը։

7. Հարվածը բաժանեցի՞ք մասերի, մասերը վերհաջրեցի՞ք և կազմեցի՞ք թեղիսներ։

(Մի վարեկ հողվածի հիման վրա թեղիսներ կազմել նշանակություն և պատճենել հողվածում արծարծված հիմնական մտքերը և զարգացնել այդ մտքերի պնդումները)։

Թեղիսների եյությունը լավ ըմբռնելու համար կարգացեց
ընկ. Ստալինի, ո.թ. հունիսի 23-ին, ոնտեսավարների խորհրդա-
գակցության ժամանակ արտասահնած ճառը և ուսումնասիրելով
այն, այս առաջադրության թեղիսները կազմելիս ուղարկաթենցեք:

Գ. Փ. Վ. Ա. Ր ՀԱՅԿԱՆ Ա. Լ. Ի Բ. Ա. Ռ. Ե. Բ

1. Բազմա—հիմք.
2. Ռեկոնստրուկցիա—մերակառուցում.
3. Պրոբլեմ—խնդիր.
4. Մոբիլիացիա—զորակոչ.
5. Եֆֆեկտ—արդյունք.
6. Եներգետիկ—եներգիայի, ելեկտրական ուժի:

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

ԲԱԼՇԵՎԻԿ Ե ՇԻՐ-ԿԱՆԱԼԸ

I

Բամշեմիկ և Շիր-կանալը—մի աժդահա հեքիաթային,
նրա շուրթը ջուր և խմում պաղ ակունքից Արփաչայի,
գլուխը հաղթ թաղել և խոր կանաչագույն գուլալ դեսում:
Պաշը հեռու կապսի ծոցում, ալիքներն և հեռու նետում:

ՄԵՇ ու մեՇ և Շիր-կանալը կամարաձեւ, գեղեցկաթով,
փաթաթիվել եւ, վո՞նց և գրկել Շիրահարթը յերկու թաթով.
մի խանդավառ կարոտ տնի, են ծարավը սիրած յարի,
վար կարծես թե սեր ու խանդի կարտաել և հազար տարի.
Հույզեր ունի սրտի խորքում, խորհրդավոր իր հորձանքով—
վաղջ իրանը դողունքի մեջ ապրումների մի կրքոտ ծով.
և ամենքին իր յերթի մեջ, ում տեսնում եւ ու ճանաչում՝
խոխոջումով, լոտու ևս մեկ, ավետում ե՝ վողջո՞ւյն, վողջո՞ւյն...

II

Բայլշեմիկ և Շիր-կանալը... այն վայրերը լերկ ու բարբառ՝
զորոնք իրենց ծնված որից այրի և յին—մերկ-անապատ
այսորից հետ հագնելու յին սիրակարոս հարսերի պես
զուք-զարդարված խաս ու զումաշ, թափիշ, մետաքս,
զառուզաքարքար:

Վո՞չ մի թիզ հող, վո՞չ մի ավան և վոչ մի դյուլ խոչկանդ դաշտից,
զորում ես, վար չի ատանջմբրու այսուհետեւ բարկ յեպաշտից:
Բայլշեմիկ և Շիր-կանալը, հողուը քաշող ամեն մարդի—
մեծունողի, ներողամիտ՝ բարեկամի ու տմարդի:

III

Բայլշեմիկ և Շիր-կանալը... դարու դարվակ այրէ հերոսին,
մեր այս գարու հարազատին ո՞վ չի տեսել, թո՞ղ զա, տեսածի.
միլիոնավոր պայթյունների, հարձակումի ականներով,
Արփաչայի ժեռ ավերին զրոհ տիրող ուռաներով,
դերքերից ովկոք, նշանաւմներ, մի թաննելը զողող մյուսին,
աշխատանքի հերոսները մատի չարժով նրան ասին—

Ուզ ձեռք մեկնես, այնտեղ հրաշք, այնտեղ մի դյուլ թող կանաչի
ուր յերեաս, ուր ել հասնես, մի նոր սերունդ այնտեղ ամի.
ով ծարավ ե, թո՞ղ հագենա, ով յարամաղ՝ թող կշտանա...
արաքես և մեր Շիր-կանալը, մի դյումքեցու ոդր'ւլ ե նա,
և՛ գարդիման, և՛ սրտաբուխ, և՛ յայնչուրթ, և՛ հյուրանեց—
քեֆը տեղը, յերգը քերնին, խոսքը շորթին, իխուստ ուր:

IV

Բայլշեմիկ և Շիր-կանալը... և գյուղեր զերկն առած
ցանցել ե իր արյունաար յերակներով համատարած.
մեկը այսուի հազարների մատին հոգաւ—մի զեկավար—
հաղարփելը խանդով վասոված պիտի հոգան մեկի համար...
Հրեն կապսը սարին կանգնած հովիտկանչի մեն և տալիս,
թէ՛ հեյ, լսե՞ք, հրես ջրիս ձե՞նի և դալիս... ձեզ ե դալի՞ս...
կանդ և առել Պոլիգոնը և սիրահար կույսի նման
բրդում եւ ու սարտում, վոր զան գրկեն, սիրեն իրան.
անհօնմբեր ե Որթաքիսան, բարախում և սիրտը նրա,
ցնծությունից շունչը պահած քիչ է մնում ճչա, պոռա.
յերազում և թոփառլան, աչքով անում Ղոնախուանին,
հասկանում և Հաջի-նազար ու կանչ անում հարևանին:

Այսպիս մեկը ձեռում մյուսին, ավետում և հեռու տեղից,
Դյուզաքամնդը՝ Քափանակին, Թափողադը՝ Իլիփարին.
այսպիս ահա մեկ մյուսին ավետում և յերկու վերատից,
թե դալիս և Շիր-կանալը—բայլշեմիկը Հայաստանի:

Ուրիշ վահմ ու սամթ ել սանի մեր բայլչելի Շիր-կանալը
նա Շիր-դաշտի մեջքը զրկած կապսի մոռից ինչպես նալը,
ջրընկեցով նորից պիտի թափվի ծոցը Արփաչայի,
վոր պայքարի միջից խլի ուժը Հիւրո-Փիկացիայի:
Յերգիներից վո՞ր մեծն եր այն, վոր յերգել և ուժի մասին.
Շիր-կանալը փրփուր խասով շիր-առյուծ և բաշը՝ լուսին.
լույս թերի փաղաքանքով պիտի ցանցի վողջ գյուղերին,
և դինամոն կայծակ-փնջով այրի նիրհը մութ հյուղերի:

Պիտի տեսմեն, վոր լուսաշաղ ամեղնելը ելեկտրոնի
միաց և ցնցում, գյուղին ստում, վոր անելիք ինքն ել ունի,
Շիր-կանալը շիրի նման հոնդացող մի պատունի—
ալիքները փրփուր խասով լույս ապագան հայաստանի:

VI

Մեր լայլէկի Շիր-կանալը ուրիշ վահմ ու սամթ ել, սանի.
ձիավորի սանձը ձեռքին հսկա ուժով ելեքտրոնի,
պիտի շարժի ու փոթորկի դործարաններ ու ֆարբիներ,
ջրաղաժներ, սղոցարան, ալեկոծի հող ու ցանքսեր:

Այն յերկիրը, վոր գարերով քարացել եր ու ցամաքել՝
այսորից հետ պիտի յերգի աշխատանքի հղոր յերգեր:
Շատ և լացել համը լացով Շիրակը իր դարդի մասին,
իսկ այսորից նա լի թոքով թող ամենից բարձր խո՛սի:

Շա՛տ և տանջին ու տոկացել անհարազատ մարդկանց ձեռքին,
իսկ այսորից թող նվաճի ու տիրանա իր նոր կյանքին:
Ու կտանջին նա ե՛լ նորից, թե չծնվեր հաղթ ուստանի,
թե չհասներ Շիր-կանալը—բայլչելիը հայստանի:

ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բարձրածայն և համապատասխան ինստիտուտով (տես № 1 սուաջաղբություն), կարդացեք այս բամաստեղծությունը և վո-
րոշեցե՛ք թե ի՞նչ տրամադրություն և ստեղծում՝ բարձր թե՛ ընկ-
ճակած:

2. Նկատվո՞ւմ և հեղինակի վերաբերմուճը զետի Շիր-կանա-
լը: Նա աշխատա՞նքը, աշխատո՞ղը, թե՞ աշխատանքի արդյունքն
ի՞ր գործում: Այդ յերգն անուարելը դիտովի՞՝, թե՞ մասնակից հիա-
ցովի յերգ ե:

3. Վերնագիրը համապատասխանում և բովանդակությանը—
«այս»-ն կամ «վոչը» հիմնավորել:

4. Այն սպասելիքները, վոր հեղինակը կապում և Շիր-կանալը
հետ-փրակակա՞ն, թե՞ յերազական են:

5. Բնդգծեցե՛ք բացականշությունները և տվեք բացականչու-
թյան նշանի սահմանումը:

6. Բնդգծեցե՛ք ածական անունները և թվեք նրանց տեսակ-
ներն ու սրանց սահմանումը:

Գ Ա Ր Ո Ւ Ի Կ

ՅԵՎ ԶԱՐԵՆՑ

1.

Ահա կրկն մեղ մոտ գարուն,
Յերեանում ահա կրկն.
գարունն անմար բույր և վառում
և բորբոքում աշխատ, գրգիռ:
Յօթը գարուն ահա արդեն՝
հեռու սրից, ահից, մահից՝
բացվում են բորբ, վասման վարդեր
արեկ սավի Խորհրդային:
Յոթը գարուն ահա արդեն՝
ծյում են վաս պայծառ թուլիեր,
յելնում են բորբ, ժամուն այնակես—
գարնանային ծաղիկ ու թերք:
Շնչում և խոր ու լիաթոք
շուրջս ահա հին մի շունչ,—
զարո՞ւն և այս ծաղկում արդյոք,
թե՞ յերկիրն և անդուլ աճում...

2.

Գարո՞ւն, գարուն Յերեանում,
Յերեանում ահա նորից
շնչում և խոր, թնդում անհուն

Տի լանդություն վոսկեսլորիկ...
 Ահա կանգնած իրար կողքի
 Արտվյանի յերկայնքն ի վեր՝
 Եւյս նու խմում զարնան շողեց
 ու կանաչում ծառերը մերկ:
 Հիշեամ ես, սիրու, զարուն մի այլ,
 յերբ անկեցին ծառերն այս նոր.
 յերբ մեր բորիկ մանկանց նման
 նրանք դեռ մերկ, նրանք տկլոր —
 Յերբ մեր լուսն մանկանց նման
 այսպես վախտ, այսպես բարակ —
 ուստ չուրջը սով, գեռ շուրջը մահ —
 շաբք կանգնեցին այսուեղ նրանք...
 Մեր մանկանց պես տկլոր, վախտ
 ծառերն այս յերբ կեցան հերթի՝
 շատերն արդյոք հավատացին
 նրանց պայծառ առավտուն...
 Տե՛ս՝ ինչպես են փթթել հիմա
 հասակ առել ու կանաչել —
 ուե՛ս՝ ինչպես են նրանք աճել
 մեր լուսեղեն մանկանց նման...

3.

Ահա կրկին մեղ մոտ զարուն,
 Յերեանում ահա կրկին
 զարունն անմար բույր և վառում
 և բարբոքում աշխուժ, գրգիռ:
 Յոթը զարուն ահա արդեն՝
 հեռու սրից, ահից, մահից՝
 բայցվում են վաստ, աճում այսպես
 Յոթը զարուն արդեն ահա
 բոյ են քաշում ծառերն այս մերկ...
 մանկեկները խորհրդացին...
 վորբեր եյին նրանք սուած,
 հիմա կայտառ պիտներներ...
 Տե՛ս՝ ինչպես են նրանք քայլում՝
 մայլամերկան յելած յերթի,
 նրանց գեմքին—խինդը փայլուն,
 շրթունքներին—վառքը վարդի:

12

Տե՛ս՝ ինչքա՞ն ե քայլքը հաստատ,
 նրանք անդուլ, նրանք վստահ,
 նրանց սրտում կորով ու ուժ...
 Ծնչում ե խոր ու լիաթոք
 նրանց յերթից յելնող մի չունչ...
 զարո՞ւն ե այս ծաղկում արդյոք,
 թե՞ յերկերն ե անդուլ աճում...

ԶԱՐՑԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ արամաբըություն ե ստեղծում այս բանաստեղծությունը՝ բա՞րձր, թէ՞ ընկճական:

2. Ի՞նչ իմաստով ե գործածված «Ահա կրկին» արտահայտությունը. շա՞տ հեռավոր անցյալի գարնան կրկնվելու, թէ՞ մուսավոր անցյալի գարնան մասին և խոսքը: Վոր սովորն են ցույց տալիս կրկնվող «զարնան» սկիզբը: Դուրս գրել «զարնան» ելությունը վորոշող հասվածները:

3. Բնդզեցեցի մեր յերկը «անդուլ աճման»—ը վերաբերող պատկերները և ձեռակերպեցեք, թե ի՞նչ անունով ենք մենք կոչում այդ «անդուլ աճման»:

4. Հեղինակը մանուկներին ինչերի հե՞տ և ի՞նչ նպատակով է համեմատում:

5. Մեր յերկը «յերեկին» ու «այսորը» համեմատելով նմանեցնում, թէ՞ հակադրում ե իջար, դուրս գրել հակադրություն հատվածները:

ԱՅՍ ԳԱՐՈՒՆ Ը

ՅԵՂԻՇԵ ԶԱՐԵՆՑ

(ԴԵՂՁԿՈՒՀԻՆԵՐԻՆ)

Մեղ մոտ զարուն ե հիմա, մեղ մոտ յեւանդ ու լարում,
 բայց զարունը մեղանում մի ա՛յլ արև և վառում:
 Այս զարունը, վոր հիմա զրնդում ե յերկում մեր —
 մենք ենք բերել պայքարով, մենք ենք կյանքում բռնկել:
 Ինչքան արև գնդա ու հուրհուրա աշխարհում —
 և չի՞ կարող բռնկել նա այլպիսի մի զարուն:
 Այս զարունը կրակվում ու բորբոքվում և բեղուն —
 յերբ ջերերի հետ մեկանեղ՝ զառաւիարգն և հեղեղում:
 Անդուլ յելած յերբ մարտի՝ արդելքներին անտարբեր՝

Քույքը դառնում է մարտիկ, կինը դառնում է ընկեր։
Յերբ ինչպիս ջուրը վարար՝ հորձանքներում պայքարից
սրբում, տառնում է հնի կոչկոմները աշխարհից։
Դուք հիմա դաշտ եք յելել, մտել ակումբ ու փողոց։
Զբնդում և մեր յերկրում ձեր բանակը հիմա հոծ։
Դուք զգարթ եք ու աղաս խորհրդային մեր յերկրում,
ձեր համուերում հարազատ, ուր աշխատանքն է բերկրում։
Յեզ ձեզ զրծում ամեն որ, ձեզ հոգաերում ու խաղում—
մեր նոր կրանքն է խրտում, մեր գարունը ծիծաղում։
Այս դարունը, վոր կյանքում չի վասի վոչ մի արև,
Յեթե ինքներս անուու աշխատանքով չվասենք։
Յեթե հրում այս մարտի, վոր յեռում է յերկրում դեռ—
չպանա քույքը՝ մարտիկ, չղանա կինը՝ ընկեր։
Այս դարունը, զրծում է մեր յերկրում...
անդու պայքարն է բերում, աշխատանքից բերկրում...

ՀԱՐՅԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Բոլոր պատաժանները հիմնավորել համապատասխան մնջրե-
րումներով)։

1. Վո՞րն է այն յերկրորդ գարունը, վոր ստեղծվել է պայ-
քարում։
2. Ինչո՞վ ե տարբերվում «դասակարգի հեղեղը, ջրի հեղե-
ղից»։ Ինչո՞վ են իրար նման այդ յերկու հեղեղները։
3. Վո՞րն է այս նոր գարնան հիմնական հատկանիշը—քեռու-
չող տողերը գուրս գրել։
4. Վո՞ր տողերն են հիշեցնում աշխատանքի այսորմա մե-
թողները—մասնավորապես հարվածայնությունը—դիւրս կրել։
5. Վոտանավորը կարողանո՞ւմ է ստեղծել բարձր տրամա-
դրությո՞ւն, թե՞ վերակառուցման շրջանի համար հնացած է—
հիմնավորել։

ԱՐԱԲՍ

ԿՈՄՈՒՆԱՑԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Որերի հետ հիմքն վազում եր նա՝ Աննան, կոմսոմոլկա Ան-
նան թուլում։

Բիբերից կրակ եր թափվում։ Նա հրազդորիչ եր։
— Աննա՛, աշխո՛ւ Աննա, լա՛վ կոմսոմոլկա, —տառամ եյին
կոմսոմոլիստները, յերը Աննան անբնկելի յեր։

Ելի Աննան նրանց հետ եր, կոմսոմոլիստների չքջանում։ Կոմ-
սոմոլիստները կատակում եյին Աննայի հետ։

Կչկչում եր Աննան, խփում նրանց ուսերին։

— Ձեղ հետ այնքան ուրա՞խ եմ. լավ լնելերներ եք։

Բայց տես'ք, —յետ-յետ քաշմեց ու ամելացրեց լրջորեն։

— Դուք տղամերդ մի քիչ խարդախ եք, ձեղ հետ այնքան ել
բարեկամաբար չպետք է վերաբերիլ։ Նկատում եյի, վոր յերը
կոմսոմոլիստիր Ծևան ժողովներում արտահայտվում եր՝ դուք
ինչպես իրար աչքով եյիք անում։

Եես դիտում՝ դուք խարդախ եք։

— Բնդհակառակն, Աննա՛, մենք խրախուսում ենք, յերը
կոմսոմոլիստականներն ակտիվանում են։ Սակայն ի՞նչ անենք, վոր
դուք կատկածամիտ եք, —ուստասիշանեց մի կոմսոմոլիստ։

— Եես դեռ այնքան պիտի աշխատեմ, չե՞ վոր կինը շատ և
յետ մնացել, չե՞ վոր մեր որերում ել դեռ նրան հաշածում են,
առաց Աննան՝ գլուխը բարձր պահած։

— Ե՞, Աննային հարկավոր ե տրիբունա. Նա հրաշալի ճառա-
խոս ե, —աղաղակեցին կոմսոմոլիստները։

— Ինչո՞վ եմ յետ մնում ձեղանից, —պատասխանեց Աննան ու
փախալ։

Արդյոք Աննան կախի ու կամուսնանա՝ լինում եյին կոմ-
սոմոլիստները։

— «Աիրել, ամուսնանալ»—ի՞նչ մեշանական տերմիններ են
դրանք», —առուրիեց Սուրենը, բջիջի քարտուղարը, —ասեք լն-
կերակցել, ընկեր ունենալ։ Մենք հնի հետ գործ չունենք։ Յերք
ասում ենք՝ կոմսոմոլիստ, կոմսոմոլիստկա՝ հասկանում ենք
նորը, նոր կենցուրից կառուցողները։

— Դու ամենից ջերմեռանդ նոր կենցաղային ես, —առաջ մի
ուրիշ կոմսոմոլիստ։

— Հըմ, —հարաբերակ Սուրենը։

— Հըմ, —ժպտացին կոմսոմոլիստները։

2.

Յերիստասարդից կյանքն արտադություն է պահանջում։ Սու-
րենն արագություն եր, նա կոմսոմոլի մի պարտուն անխմին եր։

Աշխատանքները կարգին եյին դնում, ասկայն, ինչ վոր մի
բան եր միշտ պակասում, մասավանդ, յերը մենակ եր մնում։

Համեմատով զդում եր այդ: Աւգում եր կարդալ, բայց համբերառ-թյունը հասած՝ զիբքը հրում եր մի կողմ ու կանգնում մտած-կոս: «Սաստիկ հողնած եմ, հանգստամատ, դեսից-դենից հաճելի բաներ հեշեմ, մի փոքր ել զբարլիմ անհաստական կյանքով»: Ա-ռու մտածինը ձգած, ձեռքերը կոտրատելով գոչում եր.

— Յերխտասարդություն, փորքան հուզումնալից ես դա, վորքան բացեր ունես, վոր պիտի լրացնես, — քայլում եր սենյակի մեջ, հետո պատկում անկողնու վրա:

«Հարկավոր է Աննայի հետ ավելի մտերմանալ. Աննան լով աղջիկ է, Աննան հրաշալի յն: Աննային վոչ միայն իրեն լավ ընկեր, այլ նաև իրեն հետաքրքիր աղջիկ կարելի յէ սիրել: Նա կոմածուլիս յն, նրա հետ աշդպիսի կապը կաշիմանդիչ չի լինի»: — Մտածում եր նա ու անհանգստամում, վոտքերով բոթում եր պատռու հանկարծ տեղից կանգնում:

Հույրերով, հույսերով մոռեցավ Աննային:

— Աննա՛, ինձ ընկեր դարձե՞ր, սիրելի Աննա, — այդում նրան հանդիսեց Սուրենն ու վերջապես հայոնեց իր մտալիքությունը:

— Ես քո ընկերն եմ, զու ել ուրիշների որես լավ տղա յես, — պատասխանեց Աննան հանդիսու ու պարզամիտ տոնով:

— Չե՛, ուրիշ կերպ: Ո՛, Բնէ դժվար եք հասկանում աղջիկները. ամելի քան մոտիկ, սիրու ընկերներ լինենք:

Աննան շփոթվեց:

— Ուզում ես ասել ամուսնանո՞նք:

— Հա, թիկուղ ամուսնանո՞նք:

Աննայի մտքովն այսպիսի բան դնու չեր անցել, առաջին անգամն զգաց, վոր իր դիմացը կանգնած է տղա-ընկերը, ու զող անցավ մարմնով:

— Ալ կոմսովովիստ ե, մերանցից ե, չար դիմավորություններ չունի, միշտ պաշտպանել է կոմսովովիստականներին: Ինչո՞ւ չսիրեմք — մտածեց Աննան:

— Աննա՛, զու իսկացի յնս, մեր հասարակական կյանքին շատ ոգտածիւր կլինես: Ես կաջակցեմ, վոր դու առաջարկիմնես ։ Ես կոմսովովիստ, զու կոմսովովիստում, Բնէ և պահանում մեզ, — խոսում եր Սուրենը վոգերոված:

Նա ուզում եր վարել, ծառերը դրել, ապա Աննային գրկել: Նա ուզում եր հրատաս միտինդ լիներ, վոր ինքը բարձրանար ու ճառ արտասաներ՝ Աննայի նման կոմսովովիստականների համաց:

16

— Մենք ընտանիք պիտի կազմենք, — հարցրեց Աննան՝ զըս-պելով նոր հուզումները:

— Աննա, զըս մասին գեռ չարժե խոսել, մեջքան աղջիկներից չես, վոր հավիտենական կապի ինդիբը դնես: Դու կոմսոմու-կա յես, հասկանո՞ւմ ես, աղասամի՛տ Աննա:

Նրանց աչքերը համոդիպեցին իրաք, յերկու զույգ կրակներ հասկացան իրաք: Յերկու յերխտասարդներ, յերկուսն ել անհամ-բեր . . . համբուրգեցին ծառուղում:

3.

Այդու ծառերը թարմ անքններով ծառելիս կանաչին ելի՛ տալիս. արդեն գարում եր, իր բոլոր հասպույրներով: Ծառուղի-ներում զույգեր, յերյակնը եյին զրոսնում:

Կանաչ լորենու տակ, նստարանի վրա մի փոքր իրարից հեռու հասած եյին նրանք:

— Ի՞նչ ես մտածում, Սուրենն. այս անորոշ դրությունը յեր-կա՞ր և շարունակվելու, — ասաց Աննան, վորի այտելը բավկացել եյին ու բծերով ծածկվել:

— Ի՞նչ անորոշ դրություն, պա՛րզ խոսիր, — զումպ ձայնով հարցրեց Սուրենը:

— Այս, վոր պիտի միասին ապրենք, չե՞ վոր յերեխա յես ունենալու . . .

Սուրենը ճոճացնում եր թերթը, վորը փոփած եր ծնկներին. մերթ մոտեցնում եր աչքերին, վորպես թե ուզում եր կարդալ:

— Կատարյալ պատիժ. խաթա՞ ընկա: Ի՞նչ ե, իմ ընկերնե-րից յես յե՞տ ովտի մնամ. զուցն ինձ ուղարկեն Մոտակվա սովո-րելու: Ընտանիքի հո՛դու: Այդ եր պակաս հասարակական աշխա-տանեներին կապված յերիտասարդին: Ուժի, ինչպես եմ նեղվում այս մանր-մունր, առորյա հարցերից:

Մի քանի վարկան լուս Աննան նայեց նրան.

— Ուրիմն յես ի՞նչ եմ, ուրիմն ինձ այժմ ուրիշ աչքով ես նայում, ինչպես եյիր վոգեորված խոսումներ անում, միայն ա՞յս ժամանակ . . .

— Միայն այն ժամանակ, այս՝ կրկնեց Սուրենը, — բա ի՞նչ ես կարծում, յերխտասարդն այդպես ե. ամեն ինչին վոգեորվ-թյամբ ե մոտենում, բայց հետո կարող ե սխալված լինել: Դու կոմսոմուիստիա յես, հասկացող աղջիկ, չես մտածո՞ւմ, վոր իմ շայոց լայնա:



17

ձանապարհին քար ես դնում : Վերջացրու այլ լակոտին՝ ողբը ծեր...

Աննայի դեմքը խառնվեց , Աննայի աչքերը վառվեցին .

— Վերջացնեմ , յերք Հինգ ամսական ե արդին , յերք ամհնա՞ր ե : Սուրե՛ն , յս չեյի կարծում , Սուրե՛ն , դու բոլորովին փոխած ես . . . — Աննայի ձայնը հուզմունքից դողաց , գլուխը բարձրացրեց ու հեղանքով ավելացրեց .

— Վախոս , խարդախ կոմսոմոլիստ , դե . . . — ուշում եր գալ :

— Աննա' , արա վեցից ձղեց Սուրենն ու մեղմաձայն ասաց .

— Աննա ջան , վիժում կատարիր , ելի մենք լավ ընկերներ կը լինենք . հետո կմտածենք մեր կյանքը դասավորելու մասին :

— «Հետո կմտածենք» — այդպես ես ասել միշտ , — կրկնեց Աննան սուր հեղնությամբ , — դու , վոր վերջերս անկուսակցական աշխիների առաջ ինձ վիրավորում եցիր ու խուսափում ինձանից , կարծում ես բո՞ւթ եյին : Միշտ կրկնում եցիր . «Աննա' , լավ չե , վոր միասին լինենք , մերոնք կատեն թութիւալած ամուսիններ : Աննա' , մենք նոր կենցաղի մարդիկ ենք . հենց թեկուզ քեզ համար վասե , վոր իմ կինը համարեն » : — Քո այդ հասկացողություններով քեզ նոր կենցաղային ես համարում : Շատ ներեցի , բայց ել չեմ կարող . յես ինքնասիրություն ունեմ : Ել պլրավ :

«Ինչպես . այս վիճակում ելի չի՞ ընկնծել , ուղղակի կատաղում եմ : Յերանի թե մի մեջանկայի հետ կապէցիի , նա այսպիսի խոսքեց չեր համարձակվի ինձ ասել » , — մտածում եր Սուրենը :

Յերբ նա զլուխը բարձրացրեց՝ Աննան հասել եր ծառուզու վերջը :

Սուրենը ջղաձգորեն թերթը մոտեցնում եր աչքերին , իբր թե կարդում ե :

4

Կարծես Աննան հիվանդ եր . նա մերթ-մերթ եր միայն յերեսում ժողովներում : Կարծես Աննան առաջլա աղջիկը չեր . առաջլա պես չեր հնչում զնոպուն ծիծաղը : Հետո , յերկար ժամանակ նա չհայտնվեց :

— Ո՞ւր ե Աննան :

— Ո՞ւր ե մեր ուրախ կոմսոմոլիստկան , — հարցնում եյին իբաք կոմսոմոլիստները :

Խուլ լուրեր եյին պտտում , վոր Աննան յերեխա յե ունեցել ,

վոր խայտառակ նախատինքով հայրը տանից դուրս և արել նրան , և չկիտեն՝ այժմ ո՞ւր ե Աննան :

— Աննա' , լավ' կոմսոմոլիստկա , ո՞վ եր սովասում . ի՞նչ դըժ-րախոռովուն , — խոսում եյին ընկերները :

Ամեն անդամ , յերբ խոսք եր լինում Աննայի մտախն , Սուրենը դեմքը տհաճորեն կնճռում եր : Նա այլևս խուսափում եր ընկերների հետ նոր կենցաղի մասին իսուելուց , մանավանդ , յերբ հարցերը կոնկրետ եյին լինում : Նա միշտ թափահարում եր գլուխն ու առում :

— Ժամանակը մի՛ կորցնեք . նոր կենցաղն ինքն իրեն կլինի , ի՞նչ եք գլուխ կոտրում : Այժմ ով ինչպես ուղղում ե՝ թո՛ղ ապրի :

Յերբ առանձին եր մնում , Սուրենը մտածում եր .

«Իմ առաջ դեռ այնքան հեռանկարներ կան , իսկ ընտանիքը խոչընդուն եր : Մեղավո՞ր եմ միթե : Թո՛ղ Աննան չհամաձայներ ... » :

Նա կրծոտում եր ըրթունքները , առաջվա պես իրեն հանգիստ եր զգում , դժգոհում եր իրենից ու շշնջում :

— Աննան լավ աղջիկ եր , յես նրա հետ վաս վարվեցի : Ո՛ , այդ ձուրը վոր չիմներ , յես և Աննան առջավա պես զավ ընկերներ կլինեյինք : Ե՛ւ , վերջապես ինչ եմ եսքան մտածում . մենք համապետական կապ չենք ընդունում , ախր մարդ մեկից ձանձրանում ե . . . Ես հարցերն առորյա յեն . թողնեմ . մենք կոմունիզմի համար ենք պայքարում . . . , — ապա տարակուսում եր ու բարձր զոշում , — ես նոր կենցաղն ել մի խոշոր ցավ ե , չգիտենք , չգիտենք՝ ինչպես վարվենք . . . »

5.

Յերեկո յեր : Քաղաքի նեղ , վոլորուն վողոցով յերիտասարդ մի կեն՝ կապոցի պես . մի բան գրկում՝ անցնում եր արագ :

«Յեթե չվերցնե՞ն , յեթե մերժե՞ն , ի՞նչ պիտի անեմ , վորտեղ պահեմ : Չե՛ , կիմոդրեմ , կաղաչեմ , վոր վերցնեն » :

Սուրբի դուռը ծեծում եր շոտպ , ջղաձգորեն . թերը հոգել եյին , չնչառությունը կտրվում եր :

Սպիտակ գողնոցով մի քույր փնթիփնթալով դուռը բացեց .

— Ո՞վ եք , ի՞նչ եք ուղղում . հա , ելի՞ յերեխս :

— Յերեխս , իմն ե . ո՞ւմ պետք ե դիմել մանկանն ընդունելու համար , — հարցրեց յերիտասարդ կինը :

Մի հայացքով վատից գլուխ նրան չափեց քույրն ու հեռացավ :

«Յերեկի կարծեց , թե՝ ով գիտի , ինչպիսին եմ , կամ մի փչա-

19

շած կին դուցել լինեմ»—մտածում եր կինը՝ յերեխան կըծքին սեղմած։

Դժվար թե առաջին հայացքից ճանաչելիք նրան։ զա Աննան եր աշխուժ Աննան։ Գլուխը բարձրացրեց, յերբ հերթապահ բժշկուհին Հարց ու փորձ եր անում։

— Մոռըն իմ միակ հույսն ե, ապա թե վոչ յերեխան կմեռնի։ Վոչ մի հնար չկա ուրիշ տեղ պահելու։

Քույրերը մշապատել եյին նրան։

— Էսպի'կն ե,—փափում եյին իրար մեջ։

Մանուկն սկսեց ճշալ։ Մի քույր վերցրեց մոր ձեռքից։

— Ո՞ւ, ի՞նչ լավն ե, ի՞նչ փափլկ ե։

Մյուս քույրերն ել յերեսը բացին։ ի՞նչ սիրունիկ ե։

«Ինչպես անհոգ ու հպարտ եյի, իսկ այժմ մի տեսակ ձնշում կա վրաս։ ինչքա՞ն, ինչքա՞ն խոչընդոտներ ունենք մենք։ Իսկ մերոնք, մեր կոմսոմոլիստները հաճույք են ստանում, ու հեշտ ե թվում այնպես . . .»։

Աննան սթափեց, յերբ բշտկուհին միքանի թղթեր տվեց։

— Ամբողջ քաղաքում միայն մի մոռը ե, մենք ամենանպաշտպան նորածիններին ենք ընդունում։ Դուք պետք ե դիմեք այդ մարմիններին, վոր մանկան ընդունենք։

Աննան մոլորած նայեց մանկանը։ Կարծնո բժշկուհին հասկացավ Աննայի լուռ հայացքն ու մտահոգվելով ավելացրեց։

— Քանի վոր տեղ չունեք, առայժմ յերեխային թողեք մեղ մոռ։

Աննան մի փոքր ապատ շունչ քաշեց, տիրամած նայեց բարուրին. ուզում եր դնալ՝ յերեխան ճշաց։ Նա վաղեց դեպի յերեխան, մայրական լի զգացմունքով։

— Ակսր նա քաղցած ե, տվեք կերակրեմ։

«Յեթե Սուրենն ինձ այդքան կոսիս կերպով յետ չմղեր իրենից, յեթե մի փոքր ել նա մտահոգվեր իմ վիճակով, յերեի այս նոր զգացմունքներն այսքան տանջող չեյին լինի։ ինչո՞ւ յեմ տիրում։ չե՞ վոր ապազայում բոլոր մանուկները պիտի մտուրներում մեծանան, իսկ մայրական զգացմունքներն այսքան ուժեղ, այսքան ընկճող չեն լինի։ ի՞նչ դժվար ե այս բոլորը մեր որերում»—մտածում եր Աննան՝ մանկան թաթիկները շրթունքներին հպած։

6

Մի ամիս իր մանկան մոտ մտուրում մնաց Աննան։

Շատ շուտ բոլորը մտերմացան Աննայի հետ։ Յերեխաները

փաթաթվում եյին նրան, խաղում, քաշքում փեշերից։ Իսկ Աննան իր մանկանը գրկած՝ յերպեր եր ասում ու պտուլում նրանց ժեղ։

Հոկտեմբերի ծնունդ եք,
նոր աշխարհի սերունդ եք.
լավ, լավ բալիկներ,
կարմրաթշիկ մանկիկներ . . .

— Ո՞ւ, ո՞ւ, զե՞, բոնեցե՞ք ինձ։

Յերեխաներն աղմուկով, ճիչով կախ եյին ընկնում նրա վեհացեց։

Աննան ելի նույն աշխուժ աղջիկն եր. միայն միքիչ գունատուել եր ու ավելի հասուն տեսք ստացել։

— Աննա՛, ի՞նչ բավ յերպեր ես ասում. Աննա՛, ելի քեզիր, թո՛ղ մանկիկներն ուրախանան։

— Թող մանկիկներն ուրախանան, կրկնում եր Աննան ու շարունակում յերպել.

Ենին պատին մեռել ա,
մեծ ավանդներ թողեզ ա,
պստիկ բալեզ, մեծացեզ,
նոր աշխարհը կառուցեզ . . .

— Դե, կրկնեցե՞ք, փոքրիկնե՞ր։

— Պապին . . . կառու . . . ցեք . . . — թոթովում եյին մանուկները։

— Լավ չեք ասում, անոլիտաններ, — թափահարում եր մաքն Աննան։

Մանուկն սկսում եր ճշալ, Աննան դադարեցնում եր խաղն ու զրադիվում մանկիկով։ Կամ կերակրում եր, կամ փաթաթանաները փոխում, խփում եր թաթիկներին ու ժպտում . . .

Գիշերները, յերբ մանկիկները քնած եյին լինում, Աննան կամ կարգում եր, կամ զրուցում քույրերի հետ։

Գիշեր եր։ Մանուկները մշմչում եյին։ Աննան թեք եր ընկել իր մանկան կողքին։ Քույրերը շրջապատել եյին նրան։

— Աննա՛ ջան, կոմսոմոլիստկա ջան, պատմիր քո կյանքից։ Բա դուք ինչպե՞ս եյիք սիրում իրմը, վոր չամունացաք, — հարցը քույրերը։

Աննան մի փոքր մտածելուց հետո պատասխանեց։

— Այն կոմսոմոլիստը շատ եր վախենում ընտանիք—յերեխանենալուց, — ասում եր՝ «պիտի զնամ սովորելու»։ Յես չեյի

21

կարող նրան ստիպել ու խանգարել, շատ ել թե սիրում եյի, ասացի՝ զնաս բարօվ ու...

— Զնը բայլ^ոք կոմսոմոլիստներն են այդպես:

— Բոլորը չեն, բայց պատահում են, թե մեր կոմսոմոլիստների, թե վոչ կոմսոմոլիստների մեջ այդպես մտածողներ:

— Հիմի դռ տիրում ես, Աննա:

— Տիրում ել եմ, բայց ի՞նչ անենք: Հիմի մեր կենցաղը դեռ չի կազմակերպվել, դեռ ենքան պիտի պայքարենք մեր սրտի. միջավայրի դեմ: Բայց ամենից շատ մեզ նման ճայրերը պիտի տուժեն, — պատասխանեց Աննան ու տիրությամբ աչքերը թարթեց:

7.

Աննան աշխատանք եր փնտում:

Մի որ ել յեկալ Աննան իր մանկանը և մյուս մանկիներին հրաժեշտ տալու: Նրան ուղարկում եյին գյուղ՝ աշխատելու:

Այդ որն ենքա՛ն սեղմեց մանկան իր կրծքին ու ենքա՛ն համբուրեց:

— Ինքա՞ն լավն ես, բայիկ, ի՞նչ քաղցրիկ ես, կուկու. սա՛, բա՛, բա՛, — ու համբուրում եր թաթիները:

— Դեռ վոչ վոքի այլքան չեյի կարուել: Այժմ գզում եմ, վոր ենքան պիտի կարուեմ քեզ: Թողնում եմ քեզ սրանց հետ, իմ մանկիկ, սրանց հետ մեծացի՛ր: Բոլորը քեզ պես լավն են, դու ել նրանց պես, բայիկ: Տե՛ս, չարտասվե՛ս. եստեղ ենքան մայրիներ ունես դու:

Քույրերն զգացված դիսում եյին Աննային:

— Աննա, մի՛ զնա, մեր լավ Աննա, — ասում եյին նրանք:

Աննան վերջին անողամ իր ձեռքերով սպարուքեց մանկանը ու յերբ համբուրում եր դլուխը՝ աչքերից արցունքները թափելու եյին:

Եռաջին անգամն եր Աննան այդքան վշտահար ու ընկճված:

— Ո՛, այժմ, միայն այժմ յես լը բունում և ապրում եմ մայրերի վիճակը, այժմ յես սիրում եմ բոլոր մանուկներին, — շնչում եր Աննան գլուխը մանկան կրծքին դրած:

— Դե՛, յեկե՛ք, մանկիներ, բոլորիդ ել համբուրեմ. յես դնում եմ:

— Ո՞ւր ես զնում, մենք ել ենք գալիս, — նրա վեշերից քաշքը լուսում եյին մանուկները:

Արցունքու աչքերում փայլեց մի հաղթական ժպիտ, Աննան բարձր արտասանեց.

— Գիտե՞ք, փոքրիկներ, մենք գնում ենք դեպի կոմունան...

— Մենք դեպի կոմունան, — կրկնեցին միքանի փոքրիկներ:

Բոլորն ել ախտանիքով ու ցալով հրաժեշտ տվին Աննային:

Աննան մանկանը դժկած՝ մինչեւ դուռը գնաց և չեր կարողանում անջատվել:

Մանկիները ճշում եյին, վորն արցունքու աչքերն եր տրում:

— Մի՛ զնա, Անի՛:

— Դե՛, վերցրե՛ք, վերցրե՛ք, — յերեխան մեկնեց դեպի քույրը, — չե՛, ի՞նչ կլինի, թողե՛ք միքել ել նայեմ պապլուն աչիկներին:

Մանուկը, մատը բերանում, ապշած նայում եր մորը:

— Մենք գնում ենք դեպի կոմունան, — շնչաց մանկան ականդին ու պինդ-պինդ համբուրեց:

Շփոթված եր, յերբ դուրս յեկալ փողոց, մի փոքրիկ փաթեթ թեի տակ:

Հենց ուղիղ դեպի կայարան շոտակեց, ժամի հ-ի գնացքին համանելու: Փողոցում վոչ վոքի չեր նկատում, դլուխը կալ դնում եր:

Նա տանում եր իր հետ քաղցր, բուռն հիշողություններ, մանկան ճիշտ ու ժպիտները...

ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԱՌԱՋԱԿՐՈՒԹՅՈՒՆԵՐ

1. Մեր կենցաղի վո՞ր կողմն և շոշափվում այս պատմվածքում:

2. Փորձեցեք տալ Աննայի և Սուրենի բնութագրերը:

(Բնութագրել մեկին նշանակում ե՛ տալ նրա նիստ ու կացը, սովորութները, հակումներն ու ձգտումները՝ կազմած տվյալ անձի սոցիալ-քաղաքական կեցության հետ):

Ձեզ Աննան ե դուր գալի՞ս, թե Սուրենը ինչո՞ւ:

3. Կոմյերիտականները ճի՞շտ եյին գնահատում Աննային, ի՞նչ գործնական արտահայտություն ունեցավ այդ գնահատականը:

4. Սուրենը կարողացէ՞լ եր հասկանալ նոր կենցաղը: Սուրենի այդ հասկացությունը կարելի՞ յե նոր անվանել:

5. Սուրենը և Աննան տիպե՞ր են (տես № 1 առաջադրություն), թե՞ անհամաներ: Կարելի՞ յե այդ յերկուսի արարքի միջոցով լուծել կոմունիտական բարյականության խնդիրը, յեթե վոչ, ինչո՞ւ:

6. Ի՞նչ խոչնալուներ կան նոր կենցաղի կազմակերպման ձառնագործին և ինչպես պետք ե հաղթահարել նրանց:

7. Հողմածի բոլոր 7 մասերն առանձին-առանձին ուսումնաս-
սիրել և յուրաքանչյուր մասին բնորոշ վերհագեցը տալ:

ԶՈՒԳԱԿԻՑ ԲԱՌԵՐ

1. Քննիչն «Շատ շուտով բոլորը մտերմացան Աննայի Հետ»
խոսքը:

«Շատ-շուտով», «շուտով-մտերմացան», «բոլորը մտերմա-
ցան», «Աննայի Հետ մտերմացան» զույգ բառերը զուգակցվում
են արդյոք, իմաստ կա՞ նրանց մեջ.

Իսկ «Շատ-Աննայի», «Շատ Հետ», «շուտով-Աննայի» կամ
«բոլորը-Հետ» զույգերի իմաստ ունե՞ն արդյոք:

2. Վերցնենք մի ուրիշ որինակ:

«Նրա արցունքուտ աշքերում փայլեց մի հաղթական ժպիտ»
խոսքի մեջ իրար հետ զուգակցում են հետեւյալ բառերը —
Նրա—աշքերում.

Արցունքուտ—աշքերում.

§

Աչքերում—փայլեց.

Հաղթական—ժպիտ.

Ժպիտ—փայլեց.

Մի—ժպիտ.

(Իմաստ չունեն «Նրա ժպիտ», «արցունքուտ փայլեց» և ուրիշ
նման զույգ բառեր:

Խոսքի մեջ ամեն բառ ամեն բառի հետ չի միանում—կապվում,
այլ միայն վորոշ բառ՝ վորոշ բառի հետ):

3. Ինքու խոսքեր ընտրի՛ր և զուգակցի՛ր իմաստ ունեցող
կապակից զույգ բառերը:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 3

(Մեկ ամսվա համար՝ շիածված ստուգումը):

II յեթրաբենա

ՔԱՂԱՔԸ ՎԵՐՍԿԱՎԻԳՆՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Ն Պ Ա Տ Ա Կ

Այս առաջադրությունը, յենելով նախորդ առաջադրության
տվյալներից, նպաստակ ունի պարզեցում: —
առաջական շինարարության կոնկրետ բնադրավա-
ռում տարվող աշխատանքն ու այդ միջավայրում առաջացած աշ-
խատանքային հարաբերությունների մեջ-կոմյեթիտականների դե-
ռը:

բ) Սոցիալստական շինարարության ճակատը լքող կոմյեթի-
տականներն ու անհրաժեշտ պայքարի ծափալումը նմանների դեմ:

Ն Յ Ո Ւ Թ Ւ

Այս նպատակով կարդալ Ալաղանի «Դասավելք» հոդվածը,
վոր կցված է սույնին:

24

ԴԱՍԱԼԻՔԸ

(Կրիատված)

Ալաղան

1

Կիսաքաղ արտի ծայրին նստել ե ցորենի գեղը:

Շուրջը՝ փիսրուն սև հող է:

Հողի յերեսին, սանդերքի առամների ալես ցցվել են նոր քա-
ղած ցորենի գեղին ցողոմները:

Միապաղաղ անապատում մեկ-մեկ յերեացող ուղիսների լայ-
նատերեւ արմավենիների նման, արտի գեղին տաքածության մեջ
նշանարկում են յերինչնակի փշոտ թիւերը, վորոնք դիտուիրյալ
կերպով դուրս են թողնված մանգաղի բերանից:

Փիսրուն հողի յերեսին, ցողունների մեջ, կամ հողում թաղված
քարերի վրայով, աշխույժ խլրում են հողագույն մողեսները և
փոքրիկ իսկ խչոցից՝ տամնյակ տեղերից թոշկուել են սկսում կա-
նաչալուն կիւտունները:

Յերբ արեք քիչ թեքվել ե սկսում դեպի գլուխքի ցորենագույն
սարը և գեղի կողքին ստվերի մի շերտ փոսում, քաղվոր Արտօն դե-
տին ե գցում մանգաղը, հնամաշ արխալուղի փեշերով սրբում ճա-
կատի քրտինքը և ինքն իրեն կամաց խոսելով՝ դեղի մոտ ե գալիս
հանգստանալու:

Գլխին՝ կարկատած մոխրագույն կեպի յե, վորի առջևի մա-
սում նու լրագրի մի կոտր և ամբացքել արեկի շեշտակի ու կեղիչ
ճառագայթներից դեմքը պաշտպանելու: Համար:

Յերկու կողմերից, լավացների նման, կեսու վրա բացվել են
նրա նոսոր ու մեծ ականջները:

Քթից ներքի, վերի շրթունքների վրա, պսպղում են վրոկե-
գույն աղվամազերը: Նման աղվամազերի յերկու փունջ ել նրա
ճնոտի յերկու կողմերում:

Արխալուղի քանդած կոճակների տակից յերեսում ե նրա քըրտ-
ած ու վոսպիսագույն կուրծքը:

Արտօն մենակ և քաղում իրենց արտը:
Նրա հայրն արդեն բանից ընկել ե: Ինքն ել վոր վաթսուն

25

տարեկան դատնա ու այդ վաթսունից հիսունը չարաչար աշխատանքի մեջ մսիի՝ նրա որին կընկնի:

Մայրն ել՝ յերերվելվ հազիվ հաց ու թան բերի քաղվոր վորդուն:

Իսկ տանն ել, դրանցից զատ ուրիշ վոչ վոք չկա:

Նատում է Արտոն դեղատակի շվաքում ու ինքն իրան միտք անում:

— «Ես ել կյանք ա, ես ել ապրուստ ա: Առավոտից ընշանք իրիկուն արուն-քրտինք թափի, արևի տակ տապակի ու մի քասա թանով փոր կշտացրա: Յանի ես դիմ ում համար, ընչի համար, ինչ ա մնացել ես չոգ ու անջուր չոլում: Ես ել հալբաթ կոմսոմուի կյանք ա ելի՛: Թքած ըսենց կոմսոմուի կյանքին: Թէ պատի ելի՛ ըսենց չարչարվելի, յանի ել խի կոմսոմու դրվեցի: Զե՛, իմս քար զաքն ա, ինչքան ուզում են զըողըուն եղ պառափն ու հալիվորը... Քաղաքի ու ըստեղի կյանքն ել հալբաթ մեկ են... Գնա քեզ հմար միքանի ոհաթ ծառայի ու ընդուց դուրս արի բուլվար, ողբաժեկտոր ու քեֆու արամիշ արա...»:

Դեղատակին նա յերկար եր մտածում ու խոսում ինքն իրեն, ապա մտքի թերերով քաղաք փոխաղրպում, հազար տեսակ պաշտոնի մտնում: «Ես մեկը լավ չի, փողը քիչ են տալիս... Ես մինը փոնց վոր ավելի լավն ա... Են մեկելլ դհա լավն ա... Ես ինչ լավ կյանք ա, ես ինչ լավ ապրուստ»: Թոճիկը՝ շա՛տ, սենյակը՝ լա՛վ, «քաքը-վարի»: Ամեն որ՝ թատրոն, կինո՛: Ինքն ել իրանց գյուղի վարժապետիցն ավելի «բան Փահմող ու գիտուն»... — «Ուխա՛յ, կյանքն ել զաթի ես ա», — մտածում եր Արտոն ու նորից սթափվում դեղի շվաքում:

Եերկար եր միտք անում Արտոն այսպես, ու յերբ «յերանելի» մտքերի շարանը կտրվում կամ վերջանում եր, վոնց վոր յերազում, մի սե ոձ դարձած, նրան եր մոտենում ու կարծես ձեռներին եր ուզում փաթաթվել մանդաղը:

Ելլ յեր մտածում նա, ապա պապակած կոկորդը թրջում դեղատակին թեք ընկած կտի տաք ջրովը, վեր կենում տեղից և զանդաղ, դագաղի յետելից զնացող հուզարկավորի պես, գլխիկոր ու ժառզբաղ, որորվում դեպի արտն ու մանդաղը:

Նման որերից մեկն եր:

Միաւար սվկոցով բանում եր կեռ մանդաղը:

Հասկերն որորում եյին վոսկեղույն, կոր գլխիկները և գետին փովում ամբողջ հասակով:

26

Քաղում և Արտոն, ինքն ել չի իմանում արտօնումն և թե՛ քսարքում...:

Հասկերի վոսկի գլխիկների միջից—քաղաքն և վուլել նրա դեմ եր ուղիղ փողոցներով և ու, քարաշն աներով:

...Քաղաքը... աները... պրաժեկտոր... թատրոն... պաշտոն-ներ...

Քաղում և Արտոն, «յերանալես» մտքերին հանձնված:

Աչերով՝ անմիջականուրեն արտն ու մանգաղն և տեսնում, բայց մտքի աչերով՝ սլանում հեռուներն ու հեռուները...

Բայց մանդաղը զավաճանեց նրան: Յորենի փնջի հետ նա քերեց Արտոնի ձեռքը, կարմիր տաք հեղուկով ներկելով դեղին ցողուններն ու գորշ հողը:

— Ես ել հանդ գնացողը չեմ. բոլ ա, հոդիս կերպ, ես ել ապրուստ ա, ես ել կյանք ա, թքա՛ծ ըսենց կյանքին: Ես ձեզ ասում եմ թող արեք քաղաք զնամ, փող աշխատեմ, զարկեմ ձեզ ու դուք թեք ընկեք, աղավարի կերեք. համա դուք մի կողմեց ընկած, մի բաշ ձեզ են եք քշում: Զեսս ել վրեն տի՛, բոլ ա, ել բնչ եք ուզում: Զո չե՛ք ուզում, վոր ջանդակս ել արտում շուն ու գելի փայ զառնա...»:

— Ա՛յ բալա, փորձանք ա, պատահում ա, ցախն ու փորձանքը մարդկանց հմար ա ստեղծված, հո սար ու չոլի հմար չի՛, — հաստ ձայնով վրա բերեց Արո ապին, թաղբեհի հատիկները չիշխկացնելով:

